

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(2025 թվականի հունիսի 03-ի «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի նիստի)

ք. Երևան

04 հունիսի 2025 թվական

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

- Կորպորատիվ քարտուղար Լյուդմիլա Ղազարյան,
- Իրավաբան Վարդուհի Ֆարմանյան,
- Համապատասխանության, դիսկերի և ներքին դիտարկումների բաժնի ղեկավար Անդրանիկ Բարոյան,
- Հաճախորդի փորձի ուսումնասիրման և սպասարկման որակի բարելավման բաժնի ղեկավար Զոյա Հովհաննիսյան:

Քվորումի հաշվարկ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի - 2025 թվականի հունիսի 3-ի

Տեղաբաշխված և քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր քանակ	34,650,000		100 %
	Բաժնետերերի քանակ	Բաժնետոմսերի քանակ (հատ)	Բաժնետոմսերի քանակ (տոկոս)
Լրացված քվեաթերթիկը ուղարկելու ձևով քվեարկած բաժնետերեր	40	19,776,735	0.076%
Ժողովին գրանցած բաժնետերեր	47	12,761,490	92.458%
Ընդամենը ժողովին մասնակցել են	87	32,538,225	93.9%
Քվորումն ապահովված է:			

1. Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

Կողմ՝ 32465332 բաժնետոմս (99,77598%)

Դեմ՝ 11 բաժնետոմս (0,00003%)

Ձեռնպահ՝ 287 բաժնետոմս (0,00088%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետերերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:

2. Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 2. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Կողմ՝ 32465093 բաժնետոմս (99,775%)

Դեմ՝ 0 բաժնետոմս (0 %)

Ձեռնպահ՝ 537 բաժնետոմս (0,002%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետերերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:

3. Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 3. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձի հաստատում

Որոշման նախագիծը.

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձ հաստատել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ին:

Կողմ՝ 32463396 բաժնետոմս (99,770%)

Դեմ՝ 1715 բաժնետոմս (0,005%)

Ձեռնպահ՝ 519 բաժնետոմս (0,002%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետերերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:

4. Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 4. 2024թ. տարեկան շահույթը բաշխելու մասին, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցը

Որոշման նախագիծը.

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Խորհուրդը, հաշվի առնելով 2024 թվականի տարեկան ֆինանսական գործունեության արդյունքները, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2024 թվականի դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 1 596 642 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր ինսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 36 (երեսունվեց) ՀՀ դրամ:

2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/07/2025թ.-ը ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2025 թվականի ապրիլի 30-ի օրվա վերջի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

Կողմ՝ 32464371 բաժնետոմս (99,773%)

Դեմ՝ 1000 բաժնետոմս (0,003%)

Ձեռնպահ՝ 259 բաժնետոմս (0,001%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետերոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:*

5. Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 5. 40,000,000 ՀՀ դրամի չափով գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

Որոշման նախագիծը.

Ստեղծել գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ 40,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշվում է Խորհրդի կողմից:

Կողմ՝ 32464973 բաժնետոմս (99,7749%)

Դեմ՝ 38 բաժնետոմս (0,0001%)

Ձեռնպահ՝ 619 բաժնետոմս (0,0019%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 8.5 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետերերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.7 կետում սահմանված դեպքերից:

6. Օրակարգի 6-րդ հարցի կապակցությամբ քվեարկության արդյունքների ամփոփում.

Հարց 6. Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

Որոշման նախագիծը.

Հաստատել Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը:

Կողմ՝ 32463903 բաժնետոմս (99,772%)

Դեմ՝ 1000 բաժնետոմս (0,003%)

Ձեռնպահ՝ 727 բաժնետոմս (0,002%)

Որոշումը ընդունվել է:

Կանոնադրության 10.1 կետի համաձայն՝ 10.1. Ընկերության կանոնադրության մեջ (...)Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

Հաշվիչ հանձնաժողովի կողմից հաշվարկվել են երկու անվավեր քվեաթերթիկ և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվել:

Հաշվիչ հանձնաժողովը արձանագրությունը կազմելուց և այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմուսել և հանձնել է Ընկերության արխիվ պահպանության համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝



Լ. Ղազարյան

Վ. Ֆարմանյան

Ա. Բարոյան

Զ. Հովհաննիսյան